ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1

№ 4664-Ա « 18 » նոյեմբերի 2025թ.

ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 49-րդ հոդվածի 1-ին մասով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման N 1 հավելվածի 7-րդ կետի 1-ին ենթակետի «բ» պարբերությունը և 12-րդ կետի 1-ին ենթակետը.

1. Երևան քաղաքի Մ-2 միջպետական ճանապարհի, Հ-8, Նորագավիթի 1-ին փողոց ճանապարհային հանգույցի կառուցման ներդրումային ծրագրի ամբողջական իրականացման շրջանակներում անհրաժեշտ գործընթացների կազմակերպման, այդ թվում՝ տեխնիկական հսկողության ծառայությունների, շինարարական աշխատանքների ձեռքբերման, ազդեցության գոտում գտնվող հողերի (գույքերի) վերաբերյալ գործընթացների ապահովման հետ կապված ծառայությունների ձեռքբերման և համապատասխան պայմանագրերի կառավարման նպատակով՝ «Երևանի կառուցապատման ներդրումային ծրագրերի իրականացման գրասենյակ» համայնքային ոչ առևտրային կազմակերպությանը (այսուհետ՝ «ԵԿՆ ԾԻԳ» ՀՈԱԿ) սահմանել որպես պատասխանատու ստորաբաժանում՝ հետևյալ կազմով.

Պատասխանատու ստորաբաժանման ղեկավար՝

Վարդգես Հարությունյան	«ԵԿՆ ԾԻԳ» ՀՈԱԿ-ի ճանապարհային ենթակառուցվածքների ծրագրերի ղեկավար

Պատասխանատու ստորաբաժանման անդամներ՝

Աննա Գաբրիելյան	«ԵԿՆ ԾԻԳ» ՀՈԱԿ-ի գլխավոր իրավաբան
Տատյանա Մարկարյան	«ԵԿՆ ԾԻԳ» ՀՈԱԿ-ի գլխավոր ֆինանսիստ
Լիլիթ Վարդանյան	«ԵԿՆ ԾԻԳ» ՀՈԱԿ-ի սոցիալական կառավարման և տարաբնակեցման ավագ մասնագետ
Տիգրան Մարտիրոսյան	«ԵԿՆ ԾԻԳ» ՀՈԱԿ-ի պայմանագրերի ավագ վերահսկող
Հռիփսիմե Նանագուլյան	«ԵԿՆ ԾԻԳ» ՀՈԱԿ-ի քաղաքային զարգացման ծրագրի գլխավոր ճարտարագետ

2. Սույն որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել «ԵԿՆ ԾԻԳ» ՀՈԱԿ-ի տնօրենի վրա:

3. Սույն որոշման կատարման հսկողությունն իրականացնում է Երևանի քաղաքապետը:

ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ